ՓԻՏ ՍԵՐՎԻՆԿԱ
(PETE CERVINKA)
ՏՆՕՐԷՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ

Կալիֆորնիայի նահանգ – Առողջապահության և մարդկային ծառայությունների գործակալություն
Զարգացման ծառայությունների վարչություն
1215 O Street, Sacramento, CA 95814
www.dds.ca.gov

ԳԷՎԻՆ ՆՅՈՒՍՈՄ
(GAVIN NEWSOM)
ՆԱԽԱՆԳԱՊԵՏ

25-ը նոյեմբերի, 2024թ. D-2024-Ինքնորոշման ծրագիր-002

ՈՒՄ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐ

ԹԵՄԱ՝ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳԻՐ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Զարգացման ծառայությունների վարչության (Վարչություն) սեպտեմբերի 29-ի 2023թ. ուղեցույցը պահանջում է, որ տարածաշրջանային կենտրոնները մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը շաբաթական կտրվածքով վճարեն ֆինանսական կառավարման ծառայություններ մատուցողներին: Այս ուղեցույցը թողարկվել է Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգրքի 4685.8(p)(2) բաժնի համաձայն, որը լիազորում է Վարչությանը թողարկել ծրագրի կարգավորումներ կամ նմանատիպ հրահանգներ, մինչև կընդունվեն համապատասխան կանոնակարգերը:

Սույն կարգավորումը երկարաձգում է շաբաթական վճարման պահանջը 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո մինչև հետագա ծանուցումը: Տարածաշրջանային կենտրոնները պետք է շաբաթական վճարեն ճշգրիտ ներկայացված հաշիվ-ապրանքագրերը, եթե այդպիսիք կան, ֆինանսական կառավարման ծառայություններ մատուցողներին և պետք է ճշգրտեն իրենց վճարման պրակտիկան՝ սույն պահանջը բավարարելու համար: Տարածաշրջանային կենտրոնները պետք է տրամադրեն Վարչությանը գրավոր հաղորդակցություն sdp@dds.ca.gov էլ. հասցեով, որը հաստատում է իրենց վճարման մեթոդների համապատասխանությունը տվյալ պահանջին ոչ ուշ, քան 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Եթե մասնակիցները և/կամ նրանց ընտանիքները հարցեր ունեն այս կարգավորման վերաբերյալ, ապա պետք է դիմեն իրենց տարածաշրջանային կենտրոնին: Տարածաշրջանային կենտրոններից հարցերը պետք է ուղղվեն Վարչության Ինքնորոշման ծրագրի մասնաճյուղ՝ sdp@dds.ca.gov հասցեով:

Հարգանքներով՝

Բնօրինակը ստորագրել է՝

ՄԻՉԻ Է. ԳԵՅԹՍ (MICHI A. GATES, Ph.D.)
Տնօրենի գլխավոր տեղակալ

cc: Տարածաշրջանային կենտրոնի ադմինիստրատորներ
Տպառողական ծառայությունների տարածաշրջանային կենտրոնների տնօրեններ

Տարածաշրջանային կենտրոնների համայնքային ծառայությունների տնօրեններ
Տարածաշրջանային կենտրոնների գործակալությունների ասոցիացիա
Զարգացման հաշմանդամության ծառայությունների նահանգային խորհուրդ
Փիթ Սերվինկա (Pete Cervinka), Զարգացման ծառայությունների բաժին
Կառլա Կաստանեդա (Carla Castañeda), Զարգացման ծառայությունների բաժին
Էռնի Քրուզ (Ernie Cruz), Զարգացման ծառայությունների բաժին
Ջիմ Նայթ (Jim Knight), Զարգացման ծառայությունների բաժին
Քեթլին Դեմփսի (Kathleen Dempsey), Զարգացման ծառայությունների բաժին